ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մեր մասին - - -

1. Մեր մասին

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2000 թվականի հոկտեմբերի 9-ին ընդունվեց «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը, որը հիմք հանդիսացավ Հայաստանում անկախ Հանրային հեռուստառադիոընկերության ստեղծման և գործունեության համար: Հայաստանի Հանրապետության Նախագահի 19.01.2001թ. ՆՀ-798 հրամանագրով ստեղծվել է Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը, իսկ Հանրային հեռուստառադիոընկերություն պետական հիմնարկը գրանցվել է 2001 թվականի հունիսի 7-ին (N Բ005006 պետական ռեգիստրի վկայական): Խորհուրդը Հանրային հեռուստառադիոընկերության ղեկավար մարմինն է, որը բաղկացած է հինգ անդամներից, և որոնց հաստատված մրցութային կարգի համաձայն նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը:

ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 4-ի N 592-Ն որոշման համաձայն ստեղծվել է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, որն իրականացնում է Հանրային հեռուստառադիոընկերության հեռուստատեսային հաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունը: Հանրային հեռուստաընկերությունը սկսել է իր գործունեությունը Ազգային հեռուստատեսությունից փոխանցված շենք-շինություններում ու տեխնիկական միջոցներով և հետագա տարիների ընթացքում տեխնիկական միջոցների զգալի մասը աստիճանաբար փոխարինել է նոր, ժամանակակից հեռուստատեսային տեխնիկայով: Այժմ էլ Հանրային հեռուստաընկերությունը յուրաքանչյուր տարի իրականացնում է տեխնիկական վերազինման ծրագիր՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նոր տեխնոլոգիաների և նորամուծությունների ներդրումը պահանջում է շարունակական տեխնիկական վերազինման գործընթաց:

2012 թվականին Հանրային հեռուստաընկերությունը իրականացրել է հեռուստահաղորդումների արտադրություն և հեռարձակում «Հ1» առաջին ալիքով և «Հ1» միջազգային ալիքով (արբանյակային հեռարձակմամբ): «Հ1» առաջին ալիքի հաղորդումները հեռարձակվում են հանրապետության ողջ տարածքում, իսկ «Հ1» միջազգային ալիքը հեռարձակվում է ԱՊՀ տարածքում, Եվրոպայում, Մերձավոր Արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում և Հյուսիսային Ամերիկայում: Գործունեության առաջին օրվանից Հանրային հեռուստաընկերությունը հայաստանյան հեռուստաեթերի առաջատարն է և այժմ էլ պահպանում է իր ուրույն տեղը հայկական հեռուստաեթերում՝ ապահովելով հանրության բոլոր շերտերի և խավերի պահանջմունքները բավարարող հեռուստահաղորդումների բազմազանություն:

ՀՀ կառավարության 2001 թվականի հուլիսի 20-ի N 661-Ն որոշման համաձայն ստեղծվել է «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, որն իրականացնում է Հանրային հեռուստառադիոընկերության ռադիոհաղորդումների արտադրությունն ու հեռարձակումը: Հանրային ռադիոընկերությունը իր գործունեությունը

սկսել է Ազգային ռադիոյից փոխանցված շենք-շինություններում և տեխնիկական միջոցներով: Հետագա գործունեության ընթացքում Հանրային ռադիոընկերությունը տեխնիկապես վերազինել է եթերային և տաղավարային տեխնիկական համալիրները, որի շնորհիվ ներկայումս ռադիոհաղորդումները պատրաստվում և հեռարձակվում են ժամանակակից չափանիշներին համապատասխանող տեխնիկական միջոցներով:

2012 թվականին Հանրային ռադիոընկերությունը իրականացրել է ռադիոհաղորդումների պատրաստում և հեռարձակում «Առաջին ծրագիր» և «Իմ ռադիո» ծրագրերով, պատրաստվել և հեռարձակվել են հաղորդումներ արտասահմանի համար, ինչպես նաև իրականացվել է ինտերնետային հեռարձակում: Հանրային ռադիոընկերության հաղորդումները հեռարձակվում են միջին, կարճ, գերկարճ և FM հաճախականություններով:

Հանրային ռադիոընկերությունը հայաստանյան ռադիոեթերում ընդգծված առաջատարն է և առանձնանում է իր բազմաբովանդակ և հանրության բոլոր շերտերի պահանջմունքների բավարարմանն ուղղված ռադիոհաղորդաշարերով՝ հավատարիմ մնալով Հանրային ռադիոյի առաքելությանը:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի պահանջների կատարումն ապահովելու համար ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» N 216-Ն որոշման համաձայն ստեղծվել է «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը, որի պետական սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահվել է նույնպես Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին:

Հոգևոր-մշակութային հեռուստալիքը ապահովում է հանրության բոլոր շերտերի հոգևոր և մշակութային պահանջմունքները բավարարող հաղորդումներ:

ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 29-ի «Գյումրու «Շիրակ» հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության մասին» N 1312 որոշման համաձայն «Գյումրու «Շիրակ» հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության՝ պետական սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահվել է Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին: Խորհրդի որոշմամբ ընկերությունը վերանվանվել է «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության, որն իրականացնում է հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեություն ՀՀ Շիրակի մարզում: «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերությունը իր գործունեության ընթացքում որոշակիորեն իրականացրել է տեխնիկական վերազինման աշխատանքներ, սակայն դեռևս տեխնիկական միջոցների առումով ընկերությունն ունի լուրջ խնդիրներ: Ներկայումս միջոցներ են

ձեռնարկվում Շիրակի հանրային հեռուստառադիոյի շենքային պայմանները բարելավելու և տեխնիկապես վերազինելու ուղղությամբ:

Շիրակի հանրային հեռուստառադիոն միակ մարզային Հանրային հեռուստառադիոընկերությունն է և իր հաղորդումներում հիմնականում անդրադառնում է մարզի առօրյային, խնդիրներին և մշակութային կյանքին:

ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի N 1401-Ն որոշման համաձայն «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ պետական սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի կառավարման լիազորությունները նույնպես վերապահվել են Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին: Ընկերության գործունեության հիմնական նպատակը Հանրային հեռուստառադիոընկերության կողմից հեռարձակվող հաղորդումների և հաղորդաշարերի վերաբերյալ հասարակության տարբեր շերտերի և ոլորտների ներկայացուցիչների կարծիքի ուսումնասիրությունն է, ինչը հնարավորություն է տալիս հանրությանը մասնակից դարձնել Հանրային հեռուստառադիոընկերության ծրագրերի կազմման գործընթացին:

2006 թվականից Հանրային հեռուստառադիոընկերությունը EBU-ի (Եվրոպական Հեռարձակողների Միություն) լիիրավ անդամ է, ինչը հնարավորություն է տալիս Հանրային հեռուստառադիոընկերությանը Հայաստանը ներկայացնել այդ կազմակերպության կողմից կազմակերպվող միջազգային միջոցառումներում (Եվրատեսիլ, Մանկական եվրատեսիլ և այլն), ինչպես նաև հայ հեռուստադիոտողին հասանելի դարձնել միջազգային խոշոր սպորտային և այլ միջոցառումները:

2012 թվականի վերջին «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը անդամակցել է նաև Հանրային Հեռարձակողների Միջազգային Ասոցացիային (PBI): Անդամակցությունը հանրային հեռարձակման ոլորտում առկա խնդիրների և գործունեության ուղղությունների քննարկման, փորձի փոխանակման, նոր տեխնոլոգիաների ներդրման և համագործակցության շրջանակների ընդլայնման առումներով Հանրային հեռուստաընկերությանը լայն հնարավորություններ է ընձեռում:

2. Հանրային հեռուստառադիոընկերության 2012 թվականի գործունեության նպատակները

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերությունը 2012 թվականին շարունակել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների և պարտավորությունների իրականացմանը նպատակաուղղված գործունեությունը: Ոլորտում իրականացված քաղաքականության և տարվա ընթացքում ծավալած գործունեության հիմքում դրվել են հետևյալ հիմնական նպատակները.

1. Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով ապահովել տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հեռուստառադիոհաղորդումների արտադրություն և հեռարձակում Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության, Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության և Շիրակի հանրային հեռուստառադիոյի եթերներում:
2. Արբանյակային կապուղով ապահովել Հանրային հեռուստաընկերության արբանյակային ծրագրի հաղորդումների հեռարձակումը եվրոպական երկրներում, Մերձավոր Արևելքում, Աֆրիկայում և Հյուսիսային Ամերիկայում՝ սփյուռքահայությանն ու միջազգային հանրությանը հնարավորություն ընձեռելով դիտելու Հանրային հեռուստաընկերության հաղորդումները:
3. Հանրապետության բոլոր բնակավայրերում Հանրային հեռուստաընկերության «Հ1» ծրագրի հաղորդումների հեռարձակման և բարձր որակի հեռուստաազդանշան ապահովելու համար «Հ1» ծրագրի հաղորդումների արբանյակային կապով հեռարձակում ՀՀ տարածքում:
4. Ռադիոհաճախություններով, արբանյակային հեռարձակմամբ, ինչպես նաև ինտերնետային կապով ապահովել Հանրային ռադիոընկերության հայերեն և օտար լեզուներով հաղորդումների հեռարձակումն արտասահմանում:
5. Տեխնիկական վերազինման միջոցով բարձրացնել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության հաղորդումների հեռարձակման որակը, ընդլայնել հեռարձակման տարածքը:
6. Եվրոպական հեռարձակողների միության, մի շարք եվրոպական, ԱՊՀ և այլ երկրների հեռուստառադիոընկերությունների հետ փոխշահավետ համագործակցության զարգացում և ընդլայնում:

Վերոնշյալ նպատակների ապահովման համար Հանրային հեռուստառադիոընկերությունը 2012 թվականին իր գործունեության հիմքում դրել է հետևյալ հիմնական խնդիրների իրագործումը.

- Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության, Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության և Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից պատրաստվող և հեռարձակվող հաղորդումների բազմազանության ապահովում,
- հանրապետության տարբեր տարածքների, ազգային փոքրամասնությունների, հասարակական տարբեր շերտերի, սոցիալական խմբերի շահերը և քաղաքական ուժերի

դիրքորոշումները ներկայացնող հեռուստառադիոհաղորդաշարերի ու հաղորդումների պատրաստում և հեռարձակում,

- հանրապետության ամբողջ տարածքում և արտասահմանում Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության հաղորդումների սփռման ապահովում,
- հանրությանը անկողմնակալ, հավաստի և օպերատիվ տեղեկատվությամբ ապահովում,
- հեռարձակվող հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների ընդհանուր ծավալում բնակչության լայն խավերին մատչելի հայրենական արտադրության հաղորդումների քանակի ավելացում և ամբողջությամբ հայալեզու եթերի ապահովում,
- հեռուստաընկերության և ռադիոընկերության տեխնիկական բազայի վերազինման միջոցով հանրապետության ամբողջ տարածքում հաղորդումների հեռարձակման որակի բարձրացում,
- տեխնիկական վերազինման միջոցով հեռուստառադիոհաղորդումների արտադրության տեխնիկական ծախսերի կրճատում և աշխատակիցների սոցիալական վիճակի շարունակական բարելավման ապահովում,
- հեռուստատեսության և ռադիոյի կողմից տրամադրվող տեղեկատվության նկատմամբ հանրության վստահության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում,
- բնակչության լայն խավերին հուզող և նրանց կողմից պարզաբանում պահանջող խնդիրների վերաբերյալ հաղորդումների և լրատվության ծավալների ավելացում,
- արբանյակային հեռարձակման տարածքի աստիճանական ընդլայնում՝ զուգահեռաբար կրճատելով այդ ուղղությամբ կատարվող ծախսերը,
- Եվրոպական հեռարձակողների միության անդամ, ինչպես նաև այլ հեռուստաընկերությունների ու ռադիոընկերությունների հետ համագործակցության ընդլայնում:

Վերը թվարկված խնդիրների իրագործմանն են ուղղվել «Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված միջոցները և ոլորտի ընկերությունների առևտրային գործունեությունից ստացված եկամուտները:

Հանրային հեռուստառադիոընկերության միջոցով իրականացվել են հետևյալ ծրագրերը.

- 01.01.03.02. Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ - 31985.3 հազար դրամ գումարով,
- 08.03.01.01. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում - 113354.4 հազար դրամ գումարով,
- 08.03.01.02. Հեռուստատեսային ծառայություններ -2319628.0 հազար դրամ գումարով,
- 08.03.01.03. Ռադիո ծառայություններ - 634013.6 հազար դրամ գումարով,

- 08.03.01.04. Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ - 24572.3 հազար դրամ գումարով,
- 08.03.01.06. Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ - 8000.0 հազար դրամ գումարով,
- Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ - 150000.00 հազար դրամ գումարով,
- Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում - 2800.0 հազար դրամ գումարով:

Վերոնշյալ ծրագրերով նախատեսված աշխատանքներն իրականացվել են «Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» ՊՀ-ի և «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հայաստանի հանրային ռադիոընկերություն», «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն», «Շիրակի հանրային հեռուստառադիո» և «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով:

Նշված ծրագրերի շրջանակներում փաստացի կատարված աշխատանքների ծավալները և պետական բյուջեից ֆինանսավորման ցուցանիշները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 1

2012 թվականին Հանրային հեռուստառադիոընկերության կողմից իրականացված ծրագրերի պետական բյուջեից ֆինանսավորման ցուցանիշները

(հազ. դրամ)

	Ծրագրի անվանումը	Հաստատված բյուջե	Փոփոխություններ բյուջեում (+ -)	Բյուջեն փոփոխություններից հետո	Դրամարկղային ծախսեր	Շեղում
1	Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ	31985.3		31985.3	29952.5	2032.8
2	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	113354.4	+2688.0	116042.4	113113.9	2928.5
3	Հեռուստատեսային ծառայություններ	2319628.0	-1344.00	2318284.0	2318284.0	0.0

4	Ռադիո ծառայություններ	634013.6	-1344.0	632669.6	632669.6	0.0
5	Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ	24572.3		24572.3	24572.3	0.0
6	Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ	8000.0		8000.0	8000.0	0.0
7	Հոգևոր-մշակութային հեռուստատեսային ծառայություններ	150000.0		150000.0	150000.0	0.0
8	Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում		+2800.0	2800.0	1383.1	1416.9
	Ընդամենը	**3131554.0**	**5488.0**	**3284354.0**	**3277975.0**	**6378.0**

3. Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը հանդիսանում է Հանրային հեռուստառադիոընկերության ղեկավար մարմինը, որն իր աշխատանքներն իրականացնում է ամենօրյա գործունեության և նիստերի միջոցով՝ ապահովելով իր գործունեության հրապարակայնությունը:

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը սահմանում է Հանրային հեռուստառադիոընկերության հաղորդումների հեռարձակման ընդհանուր ծավալներն ու հեռուստառադիոծրագրերի (ալիքների) թիվը, Հանրային հեռուստառադիոընկերության ֆինանսական միջոցների օգտագործման կարգն ու ուղղությունները, հաստատում է Հանրային հեռուստառադիոընկերության աշխատողների կարգավիճակը և պաշտոնները, նրանց հետ կնքվող պայմանագրերի ձևերը, պայմաններն ու վարձատրման կարգը, համակարգում է իր ենթակայության ընկերությունների ընթացիկ գործունեությունը, մշակում է ոլորտի ծրագրային քաղաքականությունը, լսում է Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության և ոլորտի մյուս ընկերությունների գործադիր տնօրենների հաշվետվությունները:

2012 թվականին Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի և նրա աշխատակազմի պահպանումն իրականացվել է «2012 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով նախատեսված

միջոցներով: Այդ ծրագրով նախատեսվել էր հատկացնել 113354.4 հազ. դրամ: Սակայն 2012 թվականին Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության առաջարկությամբ կատարվել է միջծրագրային վերաբաշխում և գործառական դասակարգման 08.03.01. «02. Հեռուստատեսային ծառայություններ» և 08.03.01. «03. Ռադիո ծառայություններ» ծրագրերի 4638 «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածներից յուրաքանչյուրից 1344.0 հազ. դրամ տեղափոխվել է 08.03.01. «01. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրի 4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդված: Արդյունքում՝ Հանրային հեռուստառադիոընկերությանը այդ ծրագրով հատկացվել է ընդամենը 116042.4 հազ. դրամ, որից ծախսվել է 113113.85 հազ. դրամ (ծախսերն ըստ առանձին հոդվածների ներկայացվել են աղյուսակ 2-ում): 2012 թվականի գործունեության արդյունքում Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ունեցել է 2928.6 հազ. դրամ գումարի տնտեսում:

Աղյուսակ 2

2012 թվականին «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով պետական բյուջեից ֆինանսավորման ցուցանիշները

(հազ. դրամ)

Ծախսային հոդվածի անվանումը	Հաստատված բյուջե	Փոփոխությունն եր բյուջեում (+ -)	Բյուջեն փոփոխություններից հետո	Դրամարկղային ծախսեր	Շեղում
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	89402.0	+2688.00	92090.00	92065.48	24.52
Վճարներ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին	10865.90		10865.90	9789.24	1,076.66
Կապի ծառայություններ	2948.20		2948.20	1715.19	1,233.01
Ապահովագրական ծախսեր	120.00		120.00	94.00	26.00
Գույքի և սարքավորումների վարձակալություն	3588.00		3588.00	3588.00	-
Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	2133.20		2133.20	1976.79	156.41
Ներկայացուցչական ծախսեր	280.00		280.00	-	280.00
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	800.00		800.00	800.00	-
Գրասենյակային նյութեր և հագուստ	417.10		417.10	379.30	37.80
Տրանսպորտային նյութեր	2764.00		2764.00	2671.60	92.40
Պարտադիր վճարներ	36.00		36.00	34.25	1.75
ԸՆԴԱՄԵՆԸ	**113354.40**	**2688.00**	**116042.40**	**113113.85**	**2928.55**

Ինչպես և նախորդ տարիներին, 2012 թվականին նույնպես Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդն իր աշխատակազմի միջոցով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով իրեն ամրագրված լիազորությունների շրջանակներում շարունակել է համակարգել Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության և ոլորտի մյուս ընկերությունների գործունեությունը: Մասնավորապես, խորհրդի կողմից հաստատվել են ընկերությունների հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների հեռարձակման ընդհանուր ծավալները և հեռուստածրագրերի և ռադիոծրագրերի /ալիքների/ թիվը, ընկերությունների 2012 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի ու դրամական հոսքերի նախահաշիվները, հաղորդումների թեմատիկ ուղղություններն ու ծավալները: Միջոցներ են ձեռնարկվել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության օրենքով ամրագրված պարտավորությունների կատարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Որոշակի փոփոխություններ են կատարվել Հանրային հեռուստառադիոընկերության ծրագրային քաղաքականության մեջ, մասնավորապես՝ ավելացել են սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային ուղղվածություն ունեցող հաղորդումների, ինչպես նաև հայրենական արտադրության ֆիլմերի և փաստավավերագրական ֆիլմերի հեռարձակման ծավալները:

Աշխատանքներ են տարվել ոլորտի միջազգային կառույցների և արտասահմանյան հեռուստաընկերությունների հետ կապերի և փոխհարաբերությունների ընդլայնման նպատակով:

Մշակվել է Հանրային հեռուստառադիոընկերության 2013-2015 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը և ոլորտի քաղաքականությունը:

4. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

2012 թվականին «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը և պատրաստել է օրական 24 ժամ հաղորդումներ «Հ1» առաջին ալիքի և 24 ժամ՝ միջազգային ծրագրի (արբանյակային հեռարձակմամբ) համար:

Հանրային հեռուստաընկերությունը պատրաստել և հեռարձակել է լրատվական, լրատվական-վերլուծական, քաղաքական, տնտեսական, հասարակական, գիտալուսավոր-չական, հայոց լեզվի և պատմության, մշակութային, կրթական, մանկապատանեկան, մարզական, երաժշտական ուղղություններով հեռուստահաղորդումներ՝ փորձելով առավելագույնս բավարարել հանրության բոլոր շերտերի հեռուստատեսային պահանջմունքները:

Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների համար «2012 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հեռուստատեսային

ծառայություններ» ծրագրով Հանրային հեռուստաընկերության համար նախատեսվել էր 2319628.0 հազ. դրամ գումար: Սակայն 2012 թվականին խորհրդի առաջարկությամբ կատարվել է միջծրագրային վերաբաշխում և «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրի 4638 «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածից 1344.0 հազ. դրամ տեղափոխվել է 08.03.01. «01. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագիր:

Ընդհանուր առմամբ, «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով 2012 թվականին «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությանը հատկացվել է 2318284.0 հազ. դրամ գումար, որից հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման իրավունքների ձեռքբերման, ինչպես նաև ընկերության ընթացիկ գործունեության ապահովման համար հատկացվել է 1746552.2 հազ. դրամ, իսկ հեռարձակման համար՝ 571731.8 հազ. դրամ:

Հեռուստահաղորդումների պատրաստում

2012 թվականին Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է պահպանել իրա առաջատար դիրքերը հայկական հեռուստաեթերում: Ընկերությունը հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման գործընթացում առաջնորդվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջներով և Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից ընդունված նպատակային ծրագրերով: Տարվա ընթացքում «Հ1» առաջին ալիքի համար պատրաստվել է խորհրդի կողմից սահմանված թեմատիկ ուղղություններով 8761.3 ժամ հաղորդումներ (տես աղյուսակ 3):

Աղյուսակ 3

2012 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից պատրաստված հաղորդումների փաստացի ծավալը՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

N	Հաղորդումների թեմատիկ ուղղությունները	Հաղորդման պատրաստման ծավալը հաշվետու ժամանակաշրջանում (ժամ)
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	826.4
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	1447.0
3	Զվարճալի	167.2
4	Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության	218.2
5	Մշակութային (այդ թվում՝ ֆիլմեր)	2980.4
6	Կրթական, մանկապատանեկան	839.3
7	Մարզական	497.2
8	Երաժշտական	822.9
9	Այլ հաղորդումներ	967.2
Ընդամենը		**8761.3**

Հանրային հեռուստաընկերության կողմից պատրաստված հաղորդումների փաստացի ծավալն՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների, ներկայացնենք նաև գրաֆիկական տեսքով:

Գծապատկեր 1.



Հեռուստալսարանի չափումներ իրականացնող ընկերության տվյալների համաձայն ՀՀ ամբողջ տարածքում Հանրային հեռուստաընկերության հեռուստադիտողների մասնաբաժինը ընդհանուր հեռուստադիտողների լսարանում 2012 թվականին կազմել է 20.28 տոկոս (տես գծապատկեր 2), որը եթե համեմատենք հարևան և մի շարք այլ պետությունների հանրային հեռուստահեռարձակողների վարկանիշների հետ, բավականին բարձր ցուցանիշ է կազմում:

Հանրայինի բազմաթիվ հաղորդումներ տարվա ընթացքում ունեցել են բավականին մեծ հեռուստալսարան: Ըստ «Տելեմեդիակոնտրոլ» փակ բաժնետիրական ընկերության վարկանշային տվյալների 2012 թվականին Հայաստանի հեռուստաեթերի ամենամեծ հեռուստալսարան ունեցող 15 հաղորդումների մեջ 8-ը Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակված հաղորդումներն ու ֆիլմերն են՝ «Հրեշտակների դպրոց» և «Գեներալի աղջիկը» հեռուստատեսային բազմասերիանոց գեղարվեստական ֆիլմերը, ֆուտբոլի Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլի Իսպանիա-Իտալիա, Գերմանիա-Իտալիա, Պորտուգալիա-Իսպանիա հանդիպումները, «Ճակատագիր» գեղարվեստական ֆիլմը,

«Կյանքի կառուսել» հեռուսռասերիալը և «Երգ երգոց» երաժշտական հեռուստանախագիծը: (Առաջին 10 ամենամեծ հեռուստալսարան ունեցող հաղորդումները ներկայացվել են գծապատկեր 3-ում):

Գծապատկեր 2.



Գծապատկեր 3.



Հանրային հեռուստաընկերությունը, 2012 թվականին իր եթերում պահպանելով բարձր վարկանիշ ունեցող հաղորդումները, եթերը համալրել է նաև մի շարք նոր հաղորդաշարերով, որոնցից շատերը նույնպես տարվա ընթացքում ունեցել են բարձր վարկանիշ և նպաստել են եթերի բազմազանության ապահովմանը:

Մասնավորապես, Հանրայինի եթերում շարունակել է հեռարձակվել «Առաջին լրատվական» լրատվական ծրագիրը, որը 2012 թվականին ևս պահպանել է իր առաջատար դիրքը հայաստանյան լրատվական ծրագրերի շարքում: Ըստ «Տելեմեդիակոնտրոլ» փակ բաժնետիրական ընկերության վարկանշային տվյալների՝ «Առաջին» լրատվականը հայկական հեռուստաեթերում շարունակել է մնալ ամենամեծ հեռուստալսարան ունեցող լրատվական ծրագիրը (դիտել է124.69 հազ. մարդ):

Գծապատկեր 4.



«Առաջին լրատվական» լրատվական ծառայության գործունեության հիմքում ընկած են օպերատիվության, օբյեկտիվ տեղեկատվության մատուցման և բազմակարծության ապահովման սկզբունքները:

«Առաջին լրատվական»-ը առանձին ներկայացնում է նաև «Առաջին սփյուռքը», որը նախատեսված է արտերկրում ապրող հայրենակիցների համար և ներկայացնում է ոչ միայն Հայաստանի, այլև արտերկրի հայ համայնքերի կյանքն ու մարդկանց գործունեությունը:

2012 թվականին Հանրայինի եթերում էր նաև «Տեսանկյուն» վերլուծական հեղինակային հաղորդաշարը, որը նույնպես ունեցել է բարձր վարկանիշ: Հաղորդաշարը ներկայայացնում է

օրվա հրատապ թեմաները քաղաքական, սոցիալական, հասարակական ամենատարբեր հարցերի շուրջ:

Հանրայինը 2012 թվականին հեռարձակել է «Առաջին լրատվական» լրատվական ծառայության «Հարցազրույց» նոր հաղորդաշարը, որն անդրադառնում է հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային և այլ կարևոր հիմնախնդիրների՝ հաղորդմանը հրավիրելով տվյալ ոլորտի պաշտոնատար անձանց, մասնագետների և հասարակական ու մշակութային գործիչների:

Հանրայինի եթերում Ազգային Ժողովի գործունեությունն են ներկայացրել «Հայլուր խորհրդարան» հաղորդաշարը և Ազգային Ժողովի «Խորհրդարանական շաբաթ» մեկժամյա թողարկումը:

2012 թվականին Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է հեռարձակել «Հրապարակում» հաղորդաշարը, որի շրջանակներում հանրությանն է ներկայացրել ՀՀ կառավարության գործունեությունը:

Հանրայինը շարունակել է հեռարձակել նաև ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվության վարչության «Զինուժ» ծրագիրը, որը տնտեսական, հասարակական ուղղվածություն ունեցող հաղորդաշարերի շարքում 2012 թվականին ունեցել է ամենաբարձր վարկանիշը (տես գծապատկեր 5): Թողարկումների ընթացքում լուսաբանվում են ՀՀ զինված ուժերի գործունեությունը, բանակի առօրյան, առաջադրված խնդիրները, աշխատանքային այցերը, հանդիպումները: «Զինուժ» հեռուստածրագիրն ունի իր խորագրերը: Այսպես՝ «Խրամատային ճշմարտություն» խորագրի ներքո ներկայացվում է հայ-ադրբեջանական պետական սահմանում իրականացվող մարտական հերթապահության ընթացքը, «Զորամասային առօրյա» խորագրի ներքո՝ զորամասերի ծառայողական առօրյան, «Պարոնայք սպաներ» խորագրի ներքո՝ բարեխիղճ ծառայությամբ աչքի ընկնող սպաների դիմանկարները, «Ապրիր և հիշիր» խորագրի ներքո՝ Արցախյան ազատամարտում և ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհված կամավորականների ու զինծառայողների դիմանկարները, «Մեր բանակի զինվորը» խորագրի ներքո՝ բարեխիղճ ծառայությամբ աչքի ընկնող ժամկետային զինծառայողների դիմանկարները, «Գորդյան հանգույց» խորագրի ներքո՝ հայ-ադրբեջանական տեղեկատվական պատերազմի թեմաները:

2012 թվականին եթերում էր նաև ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի և լրատվության վարչության «02» հաղորդաշարը, որը ցուցադրում, իրազեկում, պարզաբանում և վերլուծում է հանրապետության քրեական իրավիճակի շարժընթացը, ներկայացնում ՀՀ ոստիկանության տարբեր ստորաբաժանումների բացահայտումները, լուսաբանում ոստիկանության պաշտոնական միջոցառումները, համագործակցությունն օտարերկրյա իրավապահ կառույցների հետ:

2012 թվականին Հանրայինի եթերում էր «Հայոց հարց» հաղորդաշարը, որը նունպես այս ուղղվածության հաղորդաշարերի մեջ ունի բարձր վարկանիշ (տես գծապատկեր 5): Հաղորդաշարն անդրադառնում է պատմական իրադարձություններին ու կարևոր նշանակություն ունեցող դեպքերին և անհատներին: «Հայոց հարց» հաղորդաշարի քննարկումները ինքնանպատակ չեն և ուղղված են պատմական ճշմարտությունների բացահայտմանն ու անաչառ ուսումնասիրությանը:

Տարբեր թեմաների քննարկման և իրադարձությունների լուսաբանման անկյուն է «Ազատ գոտի» թոք շոուն, որտեղ հանրությանն հետաքրքրող բազմապիսի հարցեր են ներկայացվում՝ տարբեր ոլորտներ ներկայացնող մարդկանց միջև բանավեճեր կազմակերպելու միջոցով:

2012 թվականից Հանրայինի եթերում է «Սպասիր ինձ» հաղորդաշարը, որը հայ-ռուսական համատեղ իրականացվող հեռուստանախագիծ է: Ունենալով մարդասիրական բնույթ՝ նախագիծն օգնում է գտնել երկար ժամանակ միմյանց փնտրող մարդկանց՝ վերամիավորելով շատ ընտանիքներ, ովքեր տարբեր պատճառներով (աղետ, պատերազմ, ընտանեկան խնդիրներ և այլն) կորցրել են միմյանց:

Հանրայինի եթերում էր նաև Արցախի մասին պատմող «Բարի գալուստ Արցախ» հաղորդաշարը, որի յուրաքանչյուր թողարկում ներկայացնում է Արցախի կյանքի որևէ ոլորտ և բացահայտում դրա ամենահետաքրքիր մանրամասները:

«Զրույց» հաղորդաշարի հյուրն են լինում քաղաքական գործիչներ, տարբեր ոլորտների պատասխանատուներ և ներկայացուցիչներ, որոնց հետ զրույց է ծավալվում հասարակական, քաղաքական, սոցիալական, մշակութային թեմաներից ու խնդիրներից:

Գծապատկեր 5.


Հազ. մարդ
200
100
0
124.97
70.85
42.82
42.54
36.52
34.9
31.03
25.9
20.85
20.58
Զինուժ
Հայոց հարց
Գյուտաբերք
Գործարարներ
Հայի ուժը
Դպրություն
Անձնական կյանքի մասնագիտություն
Հայրենիք-Սայու

«Առողջության երաշխիք» հաղորդաշարը տալիս է հեռուստադիտողներին առողջապահական և բժշկական տեղեկատվություն, ներկայացնում է առողջ ապրելակերպի արդիական սկզբունքները, պատմում է տարբեր հիվանդությունների, նրանց ախտանիշների և ժամանակակից բուժման մոտեցումների մասին:

2012 թվականին Հանրայինի եթերում էին նաև «Մարդկանց երկիր», «Կարծիք», «Մերոնք», հաղորդաշարերը:

Հայկական հեռուստաեթերի քաղաքական, տնտեսական, հասարակական ուղղվածություն ունեցող հաղորդաշարերի շարքում գերակշիռ մաս են կազմում Հանրայինի հաղորդումները (տես գծապատկեր 5):

2012 թվականին Հանրայինը պատրաստել և հեռարձակել է նաև ժամանցային հաղորդումներ և հաղորդաշարեր:

«Դեպի կինո» հեռուստանախագիծը նպատակ ունի բացահայտել մարդկանց, միաժամանակ հնարավորություն ընձեռել զարգացնելու իրենց հմտությունները և այն կատարելագործել արդեն արտերկրում:

Հեռուստաեթերում էր «Գտնված երազ» հաղորդաշարը, որի մասնակիցները մշակութային, քաղաքական, սպորտային և այլ բնագավառների ներկայացուցիչներ են, որոնք հաղորդաշարի ընթացքում ներկայացնում են իրենց կյանքի, ընտանիքի ոչ այնքան հայտնի կողմերը:

Նման ուղղվածություն ունեցող հաղորդաշարերից է նաև «Իմ տաղանդավոր ընտանիքը»: Հաղորդումն ունի միջազգային ձևաչափ, իսկ նպատակը ոչ թե անհատ տաղանդներին, այլ անհայտ տաղանդավոր ընտանիքներին բացահայտելն է: Նախագիծը մրցույթային է և մրցույթին մասնակցող ընտանիքներն իրար հետ մրցում են երգի, պարի, ակրոբատիկայի և այլ ասպարեզներում:

Հանրայինի եթերում է նաև «Առավոտ լուսո» տեղեկատվական-ժամանցային հաղորդումը, որն անդրադառնում է հեռուստադիտողների լայն զանգվածներին հետաքրքրող թեմաների՝ արվեստ, շոուբիզնես, նորաձևություն, սպորտ, առողջապահություն և այլն:

2012 թվականին Հանրայինը պատրաստել և հեռարձակել է նաև գիտալուսավորչական, հայոց լեզվին և պատմությանը վերաբերող հաղորդումներ և հաղորդաշարեր (մոտ 218.2 ժամ):

Հանրայինի եթերում էր մեծ հետաքրքրություն վայելող «Օտար, ամայի ճամփեքի վրա» հաղորդաշարը, որը պատմում է տարբեր երկրների ու քաղաքների մասին, որտեղ ապրում են մեր հայրենակիցները, ներկայացնելով նաև տվյալ երկրների տեսարժան վայրերն ու մշակութային արժեքները: Իսկ «Հայաստանի ճամփեքով» հաղորդաշարը պատմում է Հայաստանի քաղաքների, գյուղերի և նրանց պատմաճարտարապետական և մշակութային հուշարձանների մասին: Հաղորդումը հետապնդում է ճանաչողական նպատակներ՝ Հայաստանը հնարավորինս մանրամասն հեռուստադիտողին ներկայացնելու համար:

Հանրայինի «Պատմության վկաները» հեռուստանախագիծը նվիրված է Հայաստանում և աշխարհում գոյություն ունեցող հայկական պատմամշակութային հուշարձաններին և բնության յուրատեսակ վկաներին: Հաղորդաշարը ներկայացնում է պատմական Հայաստանի բազմաթիվ բնակավայրեր, տեսարժան վայրեր, ուխտատեղիներ, ինչպես նաև տասնյակ բերդ-ամրոցներ ու հուշարձաններ, որոնք երբեմն այնքան էլ հայտնի չեն հեռուստադիտողի մեծ լսարանին:

Հանրայինը 2012 թվականին հեռուստադիտողին է ներկայացրել նաև մի շարք արտասահմանյան և հայրենական արտադրության փաստագրական ֆիլմեր և ֆիլմաշարեր:

Ուշադրության է արժանի «Արվեստակիրներ» շարքը, որը փաստավավերագրական ֆիլմերի հավաքածու է, 2012 թվականին այս շարքում ցուցադրվել է «Վերջին հարցազրույցը» /Հենրիկ Իգիթյան/ և «Կյանքը պարգև է» /Գեորգի Ասատուրյան/ ֆիլմերը:

Հանրայինի եթերում հեռարձակվել են նաև այլ բազմաթիվ փաստավավերագրական ֆիլմեր, մասնավորապես՝ «Փոստատարը. Ռուբեն Հախվերդյան», «Դիմանկար. Հրաչյա Ներսիսյան», «Վահրամ Փափազյան», «Վարդան Աճեմյան», «Գարունա. ձյունա արել...», «Երևանյան երազողները», «Լուսանկար», «Հասմիկ», «Երևան», «Եղիշե Չարենց», «Ճանապարհորդություն դեպի Հայաստան», «Իններորդ ալիք», «Ժողովրդի զավակը», «Երուսաղեմ. Ուխտավայր N 1», «Ուրախ տխուր մարդը», «Չիլո», «Հայաստանի ազգային պատկերասրահ», «Սուրբ խաչը՝ առանց խաչի», «Վաղը կհանդիպենք. Էդվարդ Միրզոյան», «Սրնգափողի մենանվագ», «Ճերմակ ձիավորը», «Ժողովրդի դերասանը. Հրաչյա Ներսիսյան», «Անաստաս Միկոյան», «Գոռ Վարդանյան», «Մատենադարան», «Երևանյան էսքիզներ», «Հովհաննես Թումանյան», «Անդրանիկ Օզանյան», «Կիլիկիա», «Նանսեն. «Աշխարհի խիղճը», «Մենք. /Արտավազդ Փելեշյան/», «24 ապրիլի. 1915 թ» /1-ին և 2-րդ մասեր/, «Նեմեսիս», «Աղետ», «Երևելի հայեր», «Թուրքիա. երեկ և այսօր», «Ձեզ սպասում է Երևանը», «Հայերը և 2-րդ աշխարհամարտը», «Շուշի. իրական լեգենդ», «Պոեմ հերոսական», «Մայիսյան հերոսամարտեր», «Պարի թևերով», «Կիսակայարան», «Բարեկամ մրցակիցները», «Օլիմպիական խաղեր», «Ալեքսանդր Թամանյան», «Հայոց այբուբենը և նախշերը», «Այց կինոռեժիսորի արվեստանոց», «Երևանյան շատրվաններ», «Հարիճ», «Մարադոնա», «Բարի գալուստ Ղարաբաղ», «Նարեկացի որոնելիս», «Ազգային տոն», «Տարվա եղանակներ», «Երկրայինները», «Անկախության ճանապարհին», «Պատմություն և անկախություն», «Հայկական պետականություն», «Հեքիաթ թռչնի մասին», «Պահպանիր նրան, Տիրամայր», «Արուս Ասրյան», «Լևոն Օրբելի», «Հին քարանձավների գաղտնիքը»:

Նման ֆաստավավերագրական Ֆիլմաշարերի և ֆիլմերի ստեղծումն ու հեռարձակումը կարևոր ձեռնարկ է հայ մեծերի կյանքի ու գործունեության վերաբերյալ պատմությունները հիշելու և պահպանելու, նրանց հերոսական քայլերը մեծարելու և եկող սերունդներին փոխանցելու առումով:

Հանրայինը իր եթերում միշտ մեծ տեղ է հատկացրել մշակույթին, մասնավորապես՝ հայկական մշակույթին նվիրված հաղորդումներին: Դրանք բազմաբնույթ են իրենց ընդգրկումներով և հեռուստադիտողին հնարավորություն են տալիս շփվելու արվեստին և մշակույթին նվիրյալ մարդկանց, մտավորականների հետ, լսելու մշակութային նորություններ, իմանալու այս ոլորտի նոր ձեռքբերումների մասին:

Մշակութային հաղորդումներից 2012 թվականին շարունակել են հեռարձակվել «Պարականոն», «Ներկայացումը շարունակվում է», «Կերպարվեստ», «Հեռուստաթատրոն», «Ծննդավայր» և «Հոբելյան» հաղորդաշարերը:

Մշակութային ուղղվածություն ունեցող հաղորդաշարերի շարքում գերակշիռ մաս են կազմել Հանրայինի հաղորդումները: Ամենաբարձր վարկանիշ ունեցող 10 հաղորդումներից 6-ը ցուցադրվել է Հանրայինի կողմից (տես գծապատկեր 6):

Գծապատկեր 6.



2012 թվականին Հանրային հեռուստաընկերության «Հ1» առաջին ալիքի եթերում հեռարձակվել են բազմաթիվ գեղարվեստական ֆիլմեր, ինչպես նաև հայրենական արտադրության հեռուստասերիալներ: Մասնավորապես, բավականին մեծ հեռուստալսարան են ունեցել «Գեներալի աղջիկը» և «Հրեշտակների դպրոցը» հեռուստասերիալները, որոնք 2012 թվականին հայկական հեռուստաեթերի 10 ամենամեծ լսարան ունեցող հեռուստահաղորդումներից էին (տես գծապատկեր 3):

Հայաստանյան հեռուստաեթերի մեծ հեռուստալսարան ունեցող հաղորդաշարերից է նաև «Կյանքի կարուսել» հաղորդաշարը, որի յուրաքանչյուր հաղորդում մի առանձին փոքրիկ ֆիլմ է՝ նկարահանված իրական կյանքի պատմությունների ու դեպքերի հիման վրա:

2012 թվականին շարունակվել են ֆիլմերի կրկնօրինակման աշխատանքները: Կրկնօրինակվել են բազմաթիվ գեղարվեստական, փաստագրական, ճանաչողական ու

գիտահանրամատչելի կինոնկարներ, հեռուստասերիալներ, մուլտիպլիկացիոն ֆիլմեր, որոնք հեռարձակվել են բացառապես հայերեն:

Հանրային հեռուստաընկերության եթերում շարունակել են հեռարձակվել կրթական, մանկապատանեկան մի շարք հաղորդումներ, որոնք քննարկել են երիտասարդությանը հուզող կարևոր խնդիրներ ու հիմնահարցեր:

2012 թվականին շարունակվել է հեռարձակվել «Հայ ասպետ» հեռուստամրցախաղը: Հեռուստանախագծի նպատակն է խթանել դպրոցականների ձգտումը գիտելիքների ձեռքբերման ու խորացման մեջ, նպաստել հայ պատանու ինքնաճանաչողական հիմքով համակողմանի զարգացմանը:

Բազմազան է նաև Հանրայինի մարզական եթերը: Հեռարձակվել են բազմաթիվ խոշոր միջազգային մրցաշարեր և միջոցառումներ. Ֆուտբոլի 2012 թվականի Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլի բոլոր խաղերը, Ֆուտբոլի Եվրոպայի չեմպիոնների լիգայի առաջնության խաղերը, «Լոնդոն 2012» օլիմպիական խաղերը, Հայաստանի Ֆուտբոլի բարձրագույն առաջնության խաղերը, պրոֆեսիոնալ բռնցքամարտ՝ աշխարհահռչակ հայ և օտարազգի բռնցքամարտիկների մասնակցությամբ և այլն:

Գծապատկեր 7.



«Տելեմեդիակոնտրոլ» փակ բաժնետիրական ընկերության վարկանշային տվյալների համաձայն 2012 թվականի ընթացքում հեռարձակված 10 ամենաբարձր վարկանիշ ունեցող սպորտային հաղորդումներից 7-ը ցուցադրվել են Հանրային հեռուստատեսությամբ (տես գծապատկեր 7):

Հանրայինով շարունակել է հեռարձակվել «Լրացուցիչ ժամանակ» մարզական հաղորդաշարը, որի ուշադրության կենտրոնում էր Հայաստանի ազգային հավաքականը (տարբեր տարիքային խմբեր)՝ ընտրական և ընկերական հանդիպումներով, Ֆուտբոլի Հայաստանի բարձրագույն խմբի առաջնությունը, Եվրոպական գավաթների մրցաշարերը և այլն:

Շախմատասերների համար շարունակել է եթեր հեռարձակվել «Շախմատ-64» վերլուծական հաղորդաշարը: «Շախմատ 64» հաղորդաշարը համակողմանիորեն լուսաբանել է բոլոր շախմատային միջոցառումները՝ մանրամասն տեղեկություններ հաղորդելով այդ մրցաշարերում մեր մարզիկների մասնակցության մասին: Շախմատի մասին հեռարձակվում է նաև «Շախմատի աշխարհ» հաղորդումը, որը ներկայացնում է շախմատային աշխարհի կարևոր իրադարձությունները, հաղորդաշարի հյուրերի հետ քննարկում Հայաստանում շախմատային կարևոր միջոցառումներն ու շախմատի զարգացման նախադրյալներն ու ուղղությունները, հանրակրթական դպրոցներում շախմատի առարկայի դասավանդման արդյունավետության և շախմատային աշխարհի լավագույնների մասին պատմող տեսանյութեր ու սյուժեներ:

2012 թվականին բազմազան էր նաև Հանրային հեռուստաընկերության երաժշտական եթերը: Ցուցադրվել են հանդիսատեսի կողմից մեծ ժողովրդականություն վայելող երաժշտական խոշոր միջոցառումներ, համերգներ («Եվրատեսիլ 2012», «Մանկական եվրատեսիլ 2012», «Ազգային երաժշտական մրցանակաբաշխություն 2011», Մոսկվայում կայացած «Արմենիա. երաժշտական մրցանակաբաշխություն» և այլն) և հաղորդաշարեր: Հարկ է նշել, որ 10 ամենամեծ հեռուստալսարան ունեցող երաժշտական հաղորդումներից 5-ը հեռարձակվել են Հանրայինով (տես գծապատկեր 8):

Գծապատկեր 8.



Մեծ հեռուստալսարան են ունեցել նաև Հանրայինի կողմից հեռարձակված երաժշտական հաղորդումներ՝ նվիրված տարբեր իրադարձությունների ու տոների:

Երաժշտական հաղորդումների թվում իր ուրույն տեղը շարունակել է պահպանել «Երգ երգոցը» երաժշտական ծրագիրը: Հաղորդումը ամեն շաբաթ անդրադարձել է որևէ ժամանակաշրջանի կամ որևէ կոմպոզիտորի ստեղծագործություններին: Հաղորդման ընթացքում երաժշտական կատարումները ընդմիջվում են տարբեր ժամանակաշրջանների հիշողություններով, ինչպես նաև տեղի են ունենում զրույցներ հրավիրված երիտասարդ և ավագ սերունդները ներկայացնող հյուրերի, հայտնի երաժշտագետների, կոմպոզիտորների ու մտավորականների մասնակցությամբ:

2012 թվականին երաժշտական հաղորդումներից եթերում էին նաև «Երաժշտական փոստարկղը», «Թոփ 10-ը» և այլ համերգային ծրագրեր ու հաղորդումներ:

Հանրային հեռուստաընկերությունը ներկայացրեց նաև «Մանկական եվրատեսիլ 2012» միջազգային մրցույթը, որը տեղի է ունեցել Նիդերլանդների մայրաքաղաք Ամստերդամում: Մրցույթում Հայաստանը ներկայացրել է «Compass Band» խումբը: Մրցույթ-համերգը ցուցադրվել է Հանրայինի եթերում և ունեցել բարձր վարկանիշ (դիտել է մոտ 230.0 հազ. մարդ):

Հանրայինը 24 ժամյա հեռուստահաղորդումների հեռարձակում է ապահովել նաև արբանյակային ծրագրով, որը աշխարհհայությանն է ներկայացրել «Հ1» առաջին ալիքի և հոգևոր-մշակութային հեռուստաալիքի լավագույն հաղորդումներն ու հաղորդաշարերը:

<u>Հեռուստահաղորդումների հեռարձակում</u>

2012 թվականին Հանրային հեռուստաընկերության «Հ1» առաջին ալիքի և արբանյակային ալիքի հաղորդումները հեռարձակվել են օրական 24 ժամ:

Հայաստանում հեռարձակումն իրականացվում է «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի, իսկ արբանյակային հեռարձակումը՝ «Գլոբ Քասթ Ֆրանս» ընկերության միջոցով:

Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է աշխատանքներ տանել արտասահմանի հայկական մեծ համայնքներ ունեցող բնակավայրերում կաբելային և այլ կապուղիներով Հանրային հեռուստաընկերության հաղորդումները վերահեռարձակելու ուղղությամբ՝ սփյուռքահայ մեր հայրենակիցների համար ավելի մատչելի դարձնելով Հանրային հեռուստաընկերության հաղորդումների դիտումը: Մասնավորապես, հաշվի առնելով ԱՄՆ-ում հայկական մեծ սփյուռքի առկայությունը՝ 2012 թվականին Հանրային հեռուստաընկերության հաղորդումները շարունակվել են հեռարձակվել «Գլոբ Քասթ Ֆրանս» բաց բաժնետիրական ընկերության կողմից՝ ապահովելով հեռուստաալիքի տարածումը հեռախոսային և կաբելային հեռարձակում իրականացնող ընկերությունների միջոցով (Գլոբ Քասթ Ֆրանս ընկերությունը սպասարկում է ԱՄՆ տարածքի մոտ 30%-ը): Իսկ Ֆրանսիայում կաբելային ցանցերով Հանրային հեռուստաընկերության հաղորդումները հեռարձակվում է ֆրանսիական տարբեր ընկերությունների կողմից:

ԱՊՀ երկրներում՝ հատկապես Ռուսաստանում, Ուկրաինայում, Ղազախստանում, Մոլդովայում և Վրաստանում շարունակել են աճել Հանրային հեռուստաընկերության հաղորդումների կաբելային ցանցով հեռարձակման ծավալները:

Ֆինանսատնտեսական գործունեություն

Հանրային հեռուստաընկերությունը 2012 թվականին իր գործունեությունն ապահովել է պետական բյուջեից ստացված դրամաշնորհի, առևտրային գովազդից և հովանավորությունից, սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառքից և այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

«2012 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով Հանրային հեռուստաընկերության համար նախատեսվել էր 2319628.0 հազ. դրամ գումար (ընթացիկ դրամաշնորհ):

Սակայն 2012 թվականին Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի առաջարկությամբ կատարվել է միջծրագրային վերաբաշխում և «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրի 4638 «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածից 1344.0 հազ. դրամ տեղափոխվել է 08.03.01. «01. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագիր:

Ընդհանուր առմամբ, 2012 թվականին ընկերությանը հատկացվել է 2318284.0 հազ. դրամ ընթացիկ դրամաշնորհ: Եկամուտների այլ աղբյուրներից ընկերությունը 2012 թվականին պլանավորել է ստանալ 1115251.3 հազ. դրամ եկամուտ, իսկ ստացված փաստացի եկամուտները կազմել են 1068196.1 հազ. դրամ (առանց հողի և ակտիվներին վերաբերող շնորհների): Տարբերությունը հիմնականում պայմանավորված է հովանավորությունից և այլ եկամուտներից ստացված մուտքերի կրճատմամբ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հանրային հեռուստաընկերության կողմից 2012 թվականին ստացված եկամուտներն՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 4

2012 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից ստացված եկամուտներն՝ ըստ առանձին աղբյուրների

N	Եկամտի տեսակները	2012
1	Դրամաշնորհ	2,318,284,000.0
2	Առևտրային և այլ եկամուտներ, այդ թվում՝	1,197,392,679.4
2.1	Գովազդ	691,666,666.7
2.2	Վճարովի եթերաժամանակ	38,691,422.3
2.3	Հովանավորություն	225,881,111.1

2.4	Սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառք, այդ թվում	81,118,388.1
2.5	Բաժանորդային մուծումներ	0.0
2.6	Հիմնադիրների ներդրումներ և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված ֆինանսական միջոցներ	0.0
2.7	Այլ եկամուտներ, այդ թվում	160,035,091.2
Ընդամենը		**3,515,676,679.4**

Աղյուսակի այլ եկամուտներ տողում ներառված են նաև ակտիվներին վերաբերող շնորհներից ստացված եկամուտները՝ 129196.6 հազ. դրամ (կապիտալ դրամաշնորհով ձեռքբերված ակտիվներին վերաբերող շնորհներ՝ 71623.1 հազ. դրամ և անհատույց ստացված հողի շնորհ՝ 57573.5 հազ. դրամ):

2012 թվականին ընկերությունը պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է «Հ1» առաջին ալիքի և միջազգային ծրագրի հաղորդումների արտադրությանն ու հեռարձակմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային հեռուստաընկերության 2012 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերն՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

Աղյուսակ 5

2012 թվականին Հանրային հեռուստաընկերության կողմից կատարված ծախսերն՝ ըստ առանձին ուղղությունների

N	Ծախսային ուղղությունները	Գումարը (հազ. դրամ)
1	Աշխատավարձ և Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	1,246,877.2
2	Արտադրական ծախսեր	1,580,179.8
3	Հեռարձակման ծախսեր	624,557.2
4	Այլ ծախսեր	86,724.1
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**3,538,338.3**

Աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ ծախսային հոդվածը ներառել է հիմնականում հաստիքային աշխատողների աշխատավարձի վարձատրության ծախսերը, հաղորդումների ստեղծագործական խմբերի աշխատավարձերը, ֆիլմերի և սերիալների կրկնօրինակման աշխատավարձի վարձատրության ծախսերը և դրանց պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները, որոնք կազմում են ընկերության ընդհանուր ծախսերի 35.5 %-ը:

Արտադրական ծախսերի մեջ ներառվել են հեռուստահաղորդումների արտադրության և ձեռքբերման, հեռուստահաղորդումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման և հեռարձակման ծախսերը, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածքը, արտադրական նյութերի և պահեստամասերի ձեռքբերման ծախսերը, գործուղման ծախսերը,

տրանսպորտային ծախսերը, կապի ծառայությունների ծախսերը, կոմունալ ծախսերը, լրատվության և այլ արտաքին տեղեկատվության ձեռքբերման ծախսերը, գրասենյակային ապրանքների և նյութերի ծախսերը և շենքերի, շինությունների պահպանման, տնտեսական և ընթացիկ նորոգման ծախսեր, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի 44.2 %-ը:

Հեռարձակման ծախսերը իրենց մեջ ներառում են ՀՀ տարածքում հեռարձակման և արբանյակային կապով ՀՀ տարածքում և արտասահմանում, ինչպես նաև ինտերնետային հեռարձակման ծախսերը, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի 17.8 %-ը:

Այլ ծախսերը կազմում են 2012 թվականին ընկերության կատարած ընդհանուր փաստացի ծախսերի 2.5 %-ը, որի մեջ ներառված են ներկայացուցչական ծախսերը, աուդիտի ծախսերը, հարկերը և տուրքերը և այլն:

2012 թվականի գործունեության ընթացքում հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների ձևով պետական բյուջե է վճարել 387031.0 հազ. դրամ գումար:

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 28.06.2012թ. N 27-Լ որոշման համաձայն 2012 թվականին ընկերությունը 2011 թվականի գործունեության արդյունքներով ՀՀ պետական բյուջե է վճարել 27299.8 հազ. դրամ շահութաբաժին:

2012 թվականին ընկերությունը տեխնիկական միջոցների և այլ հիմնական միջոցների ձեռքբերմանն ու նորացմանն է ուղղել մոտ 20000.0 հազ. դրամ գումար: Այդ միջոցների հաշվին կատարվել են հետևյալ աշխատանքներն ու ձեռքբերումները. Հանրային հեռուստաընկերության նոր ինտերնետային կայքի պատրաստում՝ 1700.0 հազ. դրամ, արխիվային որոնողական համակարգի տեղադրում՝ 1800.0 հազ. դրամ, Հանրային հեռուստաընկերության գլխավոր մասնաշենքի և Երևան ստուդիայի մասնաշենքի ընթացիկ նորոգման նպատակով արտադրատնտեսական գույքի ձեռք բերում և պատրաստում՝ մոտ 7000.0 հազ. դրամ, թվով 4 հատ հեռուստատեսային ամբարձիչների ձեռքբերում՝ 464.0 հազ. դրամ, «Առաջին լրատվական» ծառայության ընթացիկ կարիքների համար թվով 2 հատ դյուրակիր համակարգիչների ձեռքբերում՝ 1100.0 հազ. դրամ, թվով 10 հատ անվտանգության հսկման տեսախցիկների ձեռքբերում՝ մոտ 650.0 հազ. դրամ, հեռուստատեսային տեխնիկայի ձեռքբերում, այդ թվում՝ հեռուստացույց, պրոյեկտոր, վահանակ, խոսափող, խոսափողի տակդիր, բարձրախոս՝ մոտ 2750.0 հազ. դրամ, համակարգչային տեխնիկայի ձեռքբերում՝ մոտ 2500.0 հազ. դրամ և այլ հիմնական միջոցներ՝ մոտ 2300.0 հազ. դրամ:

Տեխնիկական վերազինման գործընթացը շարունակական է, և յուրաքանչյուր տարի ընկերությունն իրականացնում է տեխնիկական վերազինման ծրագիր՝ հաշվի առնելով այդ նպատակով առկա ֆինանսական միջոցներն ու առաջնահերթությունները:

5. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը իրականացնում է Հանրային հեռուստառադիոընկերության ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունը: Ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների համար «2012 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ռադիո ծառայություններ» ծրագրով Հանրային ռադիոընկերությանը «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսվել է հատկացնել 634013.6 հազ. դրամ: Սակայն 2012 թվականին խորհրդի առաջարկությամբ կատարվել է միջոցառումային վերաբաշխում և «Ռադիո ծառայություններ» ծրագրի 4638 «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին» հոդվածից 1344.0 հազ. դրամ տեղափոխվել է 08.03.01. «01. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագիր:

Ընդհանուր առմամբ, «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով 2012 թվականին ընկերությանը հատկացվել է 632669.6 հազ. դրամ գումար:

Ռադիոհաղորդումների պատրաստում

2012 թվականին Հանրային ռադիոընկերությունը, առաջնորդվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի պահանջներով և Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից սահմանված թեմատիկ ուղղություններով, պատրաստել և հեռարձակել է օրական մոտ 50.0 ժամ հաղորդումներ:

Հանրային ռադիոընկերության գործունեությունը 2012 թվականին նույնպես նպատակաուղղված էր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների և պարտավորությունների իրականացմանը: Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով Հանրային ռադիոընկերությունը իր գործունեության հիմքում դրել է տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի բազմազան հաղորդումների արտադրությունն ու հեռարձակումը:

2012 թվականին Հանրային ռադիոընկերությունը պատրաստել է 19210.5 ժամ ռադիոհաղորդումներ (Աղյուսակ 6-ում նշված ծավալներով)՝ հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» և «Գովազդի մասին» ՀՀ օրենքների պահանջները և Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից սահմանված թեմատիկ ուղղությունների առաջնահերթությունները.

Աղյուսակ 6

2012 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից պատրաստված հաղորդումների փաստացի ծավալը՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

N	Ռադիոծրագրերն ու ռադիոհաղորդումների թեմատիկ ուղղությունները	Հաղորդումների պատրաստման ծավալը (ժամ)
1	Առաջին ծրագիր	8784.0
1.1	Լրատվական, լրատվական-վերլուծական	1585.7
1.2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	97.0
1.3	Մշակութային հաղորդումներ	814.9
1.4	Երիտասարդական	743.6
1.5	Մանկապատանեկան	565.1
1.6	Կրթական և հայոց լեզու	117.1
1.7	Ժամանցային	433.4
1.8	Հոգևոր	263.3
1.9	Երաժշտական	4163.9
2	Երկրորդ ծրագիր (Իմ ռադիո)	8784.0
3	Արտասահմանի համար տրվող հաղորդումներ	1095.0
4	Ինտերնետային էջի համար պատրաստվող հաղորդումներ	547.5
	Ընդամենը	**19210.5**

Հանրային ռադիոյի ծրագրային քաղաքականության մեջ 2012 թվականին առանձնահատուկ տեղ են ունեցել հաշմանդամների և տարեցների, ընտանիքի, կանանց, երեխաների, մանկավարժների, բժիշկների, զինվորականների, գյուղացիների, արվեստագետների, ուսանողների և այլ սոցիալական խմբերի հիմնահարցերին վերաբերող հաղորդաշարերը: Ուշադրության առարկա են եղել բոլոր ոլորտներին և բնագավառներին առնչվող հարցերը:

Ռադիոհաղորդումների մեջ լրատվական և տեղեկատվական հաղորդումները կազմել են ռադիոեթերի զգալի մասը, որոնք անդրադարձել են քաղաքական, տեղական-լրատվական, հասարակական-քաղաքական, մարզական և այլ բնույթի իրադարձություններին: «Ռադիոլուր» ծրագիրը լրատվություն է ներկայացրել յուրաքանչյուր ժամագլխին 10-15 րոպե տևողությամբ, իսկ հիմնական թողարկումը (58 րոպե տևողությամբ) ներառել է օրվա ամբողջ լրահոսը և օրվա կարևորագույն թեմաների վերաբերյալ վերլուծական նյութեր ու հարցազրույցներ:

Օրվա լրատվությունը տեղադրվել է նաև ընկերության www.armradio.am կայքէջում, ուր տեղադրվել է նաև օրվա գլխավոր թողարկման ձայնագրությունը՝ հնարավորություն տալով ունկնդրին լսել Հանրային ռադիոյի լուրերը օրվա ցանկացած ժամին:

Ռուսախոս լսարանի համար աշխատում է «Արմենիա» լրատվական-վերլուծական հաղորդումը, որը հեռարձակվում է աշխատանքային օրերին 15 րոպե տևողությամբ: «Ռադիոլուր»-ի թղթակիցների միջոցով հնարավորինս լուսաբանվել են մարզերում առկա խնդիրները, տեղեկատվություն է հաղորդվել մասնավորապես ԱՄՆ-ից, ԼՂՀ-ից և Վրաստանից:

«Աշխարհը, հայերը և Հայաստանը» հաղորդաշարը պատրաստվում և հնչում է «Ռադիոլուրի» թողարկումներում: Այն ընդգրկում է այնպիսի թեմաներ, որոնք հայտնվել են միջազգային ոչ հայերեն լրատվամիջոցներում և վերաբերում են Հայաստանին կամ հայերին: Թեմաներն ավելի շատ ընդրգկում են սոցիալ-մշակութային ոլորտը, բայց 2012 թվականին հաճախակիացել են նաև քաղաքական ու տնտեսական անդրադարձերը:

2012 թվականին Հանրային ռադիոյի եթերում շարունակել է հեռարձակվել «Կամուրջ» Հայաստան-Սփյուռք և «Հայ իրազեկում» հաղորդաշարերը:

«Երևան» ծրագիրն ամենօրյա հաղորդումների շարք է, որի թեմատիկան ընդգրկում է մայրաքաղաքին վերաբերող տարբեր ոլորտներ: Հաղորդաշարը ներկայացրել է մայրաքաղաքի վարչական շրջաններում կատարված աշխատանքները, արձագանքել բնակիչների դիտողություններին և առաջարկություններին, ներկայացրել մայրաքաղաքում կառավարման հաջողություններն ու բացթողումները:

Հանրային ռադիոյի մշակութային հաղորդումները անդրադարձել են մշակույթին և մշակութային գործիչների կյանքին ու գործունեությանը՝ փորձելով տեսադաշտում պահել հանրապետության մշակութային կյանքի անցուդարձն ու կարևոր իրադարձությունները: Մշակութային հաղորդումներից Հանրային ռադիոյի եթերում էին «Վերնատուն», «Ժամանակի վկան», «Մեկ դերասանի թատրոն», «Մեր ձայնադարանի ֆոնդից», «Ռադիոթատրոն», հաղորդաշարերը: Հանրային ռադիոն պարբերաբար ներկայացրել է նաև Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների մշակութային կյանքը («Հայաստանը մեր տունն է» հաղորդում): Մեր թատրոնի առօրյան, խնդիրներն ու հաջողություններն է ներկայացրել «Կուլիսներ» հաղորդումը:

«Գրական հանդիպումներ» հաղորդաշարը մեզ է ներկայացնում գրականությունը, իսկ համաշխարհային ճանաչում ունեցող հայ և օտարազգի անվանի մարդկանց, աշխարհի տարբեր ժողովուրդների իմաստուն, թևավոր և բարոյախրատական մտքերով են պատրաստվում «Ասույթներ» և «Առածանի» հաղորդումները: «Պոեզիա» հաղորդաշարը ունկնդրին է ներկայացնում հայ և համաշխարհային քնարերգության լավագույն նմուշները, անդրադառնում տարբեր սերունդների ստեղծագործություններին:

Հանրային ռադիոն հեռարձակել է նաև հոգևոր հաղորդումներ («Ավետիս», «Շողակն Արարատյան», «Մանանա»), որոնք պատրաստվել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արարատյան թեմի դիվանի հետ համագործակցությամբ: Հաղորդումների ընթացքում ծանոթացրել են հայ եկեղեցու պատմությանը, եկեղեցական ծեսերին և տոնակատարություններին՝ ռադիոունկնդիրներին հնարավորություն տալով հաղորդակցվել հոգևոր կյանքին ու խոսքին, կրթվել քրիստոնեական բարքերով: Հոգևոր հաղորդումներին մասնակցում են հոգևորականներ, հոգեբաններ, ազգագրագետներ:

Հանրային ռադիոընկերության եթերում իրենց ուրույն տեղն ունեն երաժշտական հաղորդումները: Երաժշտական հաղորդումների խմբագրությունը ռադիոունկնդրին մատուցել է հայկական, ժողովրդական, գուսանական, ժամանակակից և դասական, բազմաժանր ու բազմաոճ երաժշտական ստեղծագործություններ, ունկնդրին ներկայացրել հայ մեծանուն կոմպոզիտորների ստեղծագործությունները: Ներկայացվել է հայ ազգային երաժշտության տարբեր շերտեր՝ սկսած հնագույն ժողովրդական երգերից մինչև մեր օրերում ստեղծագործող աշուղներին:

2012 թվականին երաժշտական հաղորդումներից Հանրային ռադիոյի եթերում շարունակել են հեռարձակվել «Արմատներ», «Կամերտոն», «Էտյուդներ», «Գանձարան», «Հանրային տասնյակը», «Մեկ երգի պատմություն», «Երաժշտությունն ու մենք», «Մեկ գործիքի պատմություն» հաղորդաշարերը:

2012 թվականին Հանրային ռադիոյում շարունակել են իրենց գործունեությունը էստրադային սիմֆոնիկ նվագախումբը, «Սայաթ Նովա» աշուղական երգի, «Արևիկ» մանկապատանեկան և Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների վաստակավոր անսամբլները: Վերջիններս տարվա ընթացքում համալրել են Հանրային ռադիոյի ֆոնդը նոր ձայնագրություններով, որոնք պարբերաբար հնչել են Հանրային ռադիոյի երաժշտական ծրագրերում:

Հանրային ռադիոն հեռարձակել է նաև մի շարք մանկապատանեկան ծրագրեր (Զարթուցիչ, Հարի Փոթերի ակումբ, Կար-չկար, Պստիկաշեն), որոնք հեռարձակվել 2012 թվականին ամեն օր՝ 60 րոպե ընդհանուր տևողությամբ:

Յուրաքանչյուր կիրակի եթեր է հեռարձակվել մանկական ռադիոթատրոն:

Մանկապատանեկան ծրագրերում առանձնանում է «Լյա-լյա-ֆա» մանկապատանեկան երգի հիթ-շքերթը, որը հնարավորություն է ընձեռում ներկայանալ երեխաների համար ստեղծագործող կոմպոզիտորներին, մանուկ ու պատանի երգիչներին:

Երիտասարդական ծրագրերից 2012 թվականին Հանրային ռադիոյի եթերում էր «Լյուն-սե» երիտասարդական հաղորդաշարը, որի ընթացքում լուսաբանվել են կրթական, բնապահպանական, հասարակական, սոցիալական, մշակութային ու մարզական ոլորտների խնդիրները, պարբերաբար անդրադարձել մարզերում ապրող երիտասարդությանը հուզող խնդիրներին, պատմել արտասահմանում ապրող հայ երիտասարդների մասին: Ծրագրերում իրենց տեղն ունեն «Խելք խելքի», «Մարզական խաչմերուկ», «Ապրելու բանաձև» և «ՌադիոԱրտ» հաղորդումները:

Հանրային ռադիոընկերությունն իր հայերենի նկատմամբ հոգատար և հարգալից վերաբերմունքով ապացուցում է, որ կարելի է գրագետ ու կիրթ հայերենով ռադիոեթերում լինել ժամանակակից ու հետաքրքիր: Լեզվի և խոսքի պահպանման գործում առանձնանում են «Մենք և մեր բառերը» և «Խոսենք հայերեն» հաղորդումները, որոնք աջակցում են ունկնդիրներին ծանոթանալ մեր մայրենի լեզվի բառաշարի ծագումնաբանությանը և անաղարտ պահել մայրենին:

Հանրային ռադիոյի կողմից Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2012 թվականի մայիսի 6-ի ընտրություններին համամասնական ընտրակարգով մասնակցող կուսակցություններին և կուակցությունների դաշինքին տրամադրվել է անվճար 946 րոպե 37 վրկ. և վճարովի 304 րոպե 8 վրկ. եթերաժամ:

Հանրային ռադիոընկերության «Երկրորդ ծրագիր»-ը («Իմ ռադիոն») բազմաժանր ու բազմառճ երաժշտական, ժամանցային, հետաքրքիր ծրագիր է երիտասարդների համար, որտեղ ներկայացվել են անցյալի և ժամանակակից հայ ու օտարազգի կատարողների լավագույն ստեղծագործությունները: «Երկրորդ ծրագիր»-ը հեռարձակվում է 103.8 ՄՀց հաճախականությամբ Երևանում և հարակից շրջաններում:

Ռադիոհաղորդումների հեռարձակում:

2012 թվականի ընթացքում Հանրային ռադիոյի ռադիոհաղորդումները հեռարձակվել են միջին, կարճ, գերկարճ և FM տիրույթի հաճախություններով: Հեռարձակման աշխատանքներն իրականացվել են «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ–ի սեփական տեխնիկական միջոցներով, «Ռադիո» ՓԲԸ, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ ընկերությունների կողմից, ըստ սահմանված որակական և տեխնիկական չափանիշների:

Հանրային ռադիոընկերության հաղորդումները եթեր են հեռարձակվել նաև ինտերնետային կապի միջոցով, որտեղ տեղադրվել է ամենժամյա լուրերի էլեկտրոնային տարբերակը՝ հայերենով և անգլերենով: Հեռարձակման աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով՝ պահպանելով ծրագրերի արտադրության և հեռարձակման չափանիշները:

Ֆինանսատնտեսական գործունեություն

Հանրային ռադիոընկերությունը 2012 թվականին իր գործունեությունը ապահովել է դրամաշնորհի ձևով պետական բյուջեից ստացված եկամուտների, առևտրային գովազդից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

«2012 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ռադիո ծառայություններ» ծրագրով Հանրային ռադիոընկերության համար նախատեսվել էր 634013.6 հազ. դրամ գումար: Հանրային հեռուստառադիոընկերության առաջարկությամբ ՀՀ 2012 թվականի պետական բյուջեում կատարվել է միջծրագրային վերաբաշխում և «Ռադիո ծառայություններ» ծրագրից 1344.0 հազ. դրամ տեղափոխվել է «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագիր:

Ընդհանուր առմամբ, «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով 2012 թվականին ընկերությանը հատկացվել է 632699.6 հազ. դրամ: Եկամուտների այլ աղբյուրներից ընկերությունը 2012 թվականին պլանավորել է ստանալ 33511.2 հազ. դրամ եկամուտ: Հավաքագրված եկամուտները կազմել են 36313.6 հազ. դրամ (առանց ակտիվներին վերաբերող շնորհների):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հանրային ռադիոընկերության կողմից 2012 թվականին ստացված եկամուտներն՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 7.

2012 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից ստացված եկամուտներն՝ ըստ առանձին աղբյուրների

N	Եկամտի տեսակները	Գումարը (հազ. դրամ)
1	Դրամաշնորհ	632,669.6
2	Առևտրային և այլ եկամուտներ, այդ թվում՝	109,895.6
2.1	Գովազդ	12,000.0
2.2	Վճարովի եթերաժամանակ	912.4
2.3	Այլ եկամուտներ	96,983.2
	Ընդամենը	**742,565.2**

Ակտիվներին վերաբերող շնորհներից ստացված եկամուտները (73582.1 հազ. դրամ) ներառվել է աղյուսակի այլ եկամուտներ տողում, ընդ որում՝ ակտիվներին վերաբերող շնորհների գերակշիռ մասը՝ 68348.3 հազ. դրամ, անհատույց ստացված հողի գծով շնորհն է:

2012 թվականին Հանրային ռադիոընկերությունը պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է «Առաջին ծրագիր» և «Երկրորդ ծրագիր» (Իմ ռադիո) ռադիոծրագրերի, ինչպես նաև արտասահմանի համար պատրաստվող հաղորդումների արտադրությանն ու հեռարձակմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային ռադիոընկերության 2012 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերն՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների:

Աղյուսակ 8

2012 թվականին Հանրային ռադիոընկերության կողմից կատարված ծախսերն՝ ըստ առանձին ուղղությունների

N	Ծախսային ուղղությունները	Գումարը (հազ. դրամ)
1	Աշխատավարձ և Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	460,981.5
2	Արտադրական ծախսեր	157,270.4
3	Հեռարձակման ծախսեր	119,671.2
4	Այլ ծախսեր	21,385.0
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**759,308.1**

Աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ ծախսային հոդվածը ներառել է հիմնականում հաստիքային աշխատողների աշխատավարձի վարձատրության ծախսերը, հաղորդումների ստեղծագործական խմբերի աշխատավարձերը և

դրանց գծով պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները, որոնք կազմում են ընկերության ընդհանուր ծախսերի 61.71 %-ը:

Արտադրական ծախսերի մեջ ներառվել են հիմնականում հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածքը, կոմունալ ծախսերը, կապի ծառայությունների ծախսերը, տրանսպորտային ծախսերը, ռադիոհաղորդումների ձեռքբերման ծախսերը, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի 20.71 %-ը:

Հեռարձակման ծախսերն իրենց մեջ ներառում են ՀՀ տարածքում և արբանյակային կապով արտասահմանում հեռարձակման ծախսերը, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի 15.76 %-ը:

Այլ ծախսերը կազմում են 2012 թվականին ընկերության կատարած ընդհանուր փաստացի ծախսերի 2.82 %-ը:

2012 թվականի գործունեության ընթացքում հարկերի և տուրքերի ձևով պետական բյուջե է վճարել 122,917.7 հազ. դրամ գումար:

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 28.06.2012թ. N 28-Լ որոշման համաձայն 2012 թվականին ընկերությունը 2011 թվականի գործունեության արդյունքներով ՀՀ պետական բյուջե է վճարել 11981.5 հազ. դրամ շահութաբաժին:

Հանրային ռադիոընկերությունը 2012 թվականին տեխնիկական վերազինմանն ու այլ հիմնական միջոցների ձեռքբերմանն է ուղղել 14232.3 հազ. դրամ գումար, մասնավորապես՝ 3418.8 հազ. դրամ ուղղվել է համակարգչային տեխնիկային ձեռքբերմանը, 5945.1 հազ. դրամ՝ ձայնագրիչների և ձայնագրող խոսափողի ձեռքբերմանը, 2498.4 հազ. դրամ՝ մոդուլյատորի և ալեհավաքի ձեռքբերմանը և 2370.0 հազ. դրամ՝ այլ հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերմանը:

6. «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հարապետության օրենքի պահանջների կատարումն ապահովելու համար ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 24-ի «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին» N 216-Ն որոշման համաձայն ստեղծվել է «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն: Հոգևոր-մշակութային հեռուստաալիքի գործունեությունը ամբողջությամբ ուղղված է ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ու արդի մշակութային կյանքի համակողմանի ներկայացմանն ու լուսաբանմանը, հոգևոր բարոյական արժեքների քարոզչությանը:

Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության հեռուստածրագրերը 2012 թվականին եթեր են հեռարձակվել օրական 18 ժամ տևողությամբ: Ընդհանուր առմամբ, 2012 թվականին ընկերությունը հեռարձակել է 6554.0 ժամ հաղորդումներ:

2012 թվականին ընկերության հեռուստաեթերի 89.1 տոկոսը կազմել են հոգևոր-մշակութային, իսկ 10.9 տոկոսն ընդհանուր ուղղվածության հեռուստահաղորդումներ: Իսկ հոգևոր-մշակութային հաղորդումների կառուցվածքն՝ ըստ առանձին ուղղվածություն ունեցող հաղորդումների, ներակայացված է գծապատկեր 9-ում:

Գծապատկեր 9.



Հեռարձակվել են «Մշակութային ազդագիր» և «Ձայնագիր» մշակութային-լրատվական հաղորդումները, որոնք իրենց հիմնական թողարկումներում և հավելվածներում ներկայացրել են բազմաժանր ծրագրեր հեռուստադիտողների տարբեր տարիքային խմբերի համար:

«Ձայնագիր» հառուստահաղորդաշարը լուսաբանել է ՀՀ երաժշտական կյանքը, ներկայացրել երևանյան համերգասրահներում կազմակերպված ժողովրդական, աշուղական, ակադեմիական և ժամանակակից երաժշտության նշանակալից միջոցառումները: Հեռուստադիտողին ներկայացվել են 2012 թվականին Հայաստանում կայացած մի շարք երաժշտական փառատոններ՝ «Ազգային պատկերասրահ միջազգային երաժշտական փառատոնը», «Հայ կոմպոզիտորների արվեստի փառատոնը», «Երևանյան հեռանկարներ» փառատոնը, «Վերադարձ» դասական երաժշտության փառատոնը, «Հայաստանի պատանի տաղանդներ» փառատոնը, ջազ և ռոք փառատոնները, միջազգային հռչակ վայելող նվագախմբերի, դիրիժորների և կատարողների մասնակցությամբ համերգներ, հայկական և եվրոպական հոգևոր երաժշտության համերգներ, ազգային երաժշտության, ավանդական երգ ու պարի համույթների, աշուղական երաժշտական համույթների համերգներ:

Հեռուստաընկերությունը հեռարձակել է դասական և ժամանակակից հայ և այլազգի կոմպոզիտորների ստեղծագործություններ, հայտնի ու նորահայտ ստեղծագործողների համերգներ:

«Շողակաթ» հեռուստաընկերության հետ համատեղ 2012 թվականին Երևանի տարբեր համերգասրահներում տեսագրվել և հեռուստաընկերության կողմից հեռարձակվել են մի շարք համերգային ծրագրեր. Վերադարձի 6-րդ փառատոն. բացման համերգը՝ Իսրայելի «Կամերատա Երուսաղեմ» նվագախմբի մասնակցությամբ, «ՎԱՆ փրոջեքթ» ազգագրական անսամբլի համերգը, «ԱՐՏ-Սինեմա» քառյակի համերգը Գաֆեսճեան սրահում, «Տոնական համերգ» Ալ. Սպենդիարյանի անվ. օպերային թատրոնում, երկու համերգ «Սպենդիարյանական երեկոներ» համերգաշարքից, «Ակուստիկ գույներ» կվարտետի համերգը, Դավիթ Հալաջյանի խմբերգային ստեղծագործությունները Հայաստանի Պետական Կամերային երգչախմբի կատարմամբ, հաշմանդամների միջազգային օրվան նվիրված Ալ. Սպենդիարյանի անվ. օպերային թատրոնի սիմֆոնիկ նվագախմբի համերգը, Երևանի Պետական Կամերային երգչախմբի համերգը, Ս. Ռախմանինովի «Ալեկո» օպերան, և Ս. Ռախմանինովի երկրորդ կոնցերտը դաշնամուրի և նվագախմբի համար Ալ. Սպենդիարյանի անվ. օպերային թատրոնի սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ:

«Մշակութային ազդագիր» հաղորդաշարը լուսաբանել է ՀՀ մշակույթի ոլորտում տեղի ունեցած կարևոր միջոցառումները: Հեռուստադիտողին ներկայացվել են 2012 թվականին հայաստանյան թատրոնների պրեմիերաներն ու խաղացանկերը: «Մշակութային ազդագիրը» հիմնական ու հատուկ թողարկումներով թատերասեր հանդիսատեսին հնարավորություն է տվել հետևել Հայաստանում կազմակերպված բոլոր թատերական փառատոններին՝ «X փառատոն», «Արմմոնո», «Տիկնիկային թատրոնների միջազգային փառատոն», «Արտ էքսպո», «Հայֆեստ», «Շեքսպիրյան միջազգային փառատոն», «Մեկ քառակուսի մետր»: Նույն հաղորդաշարն անդրադարձել է գրքի ու գրահրատարակության ոլորտի խնդիրներին ու կազմակերպված միջոցառումներին: ՀՀ Մշակույթի նախարարության հետ համատեղ լուսաբանվել են «Հայ տպագրություն 500» պետական ծրագրի և «Երևան-գրքի միջազգային մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում արտերկրում և Հայաստանում կազմակերպված բոլոր կարևոր միջոցառումները, հայ գրահրատարակչության միջազգային ցուցահանդեսներն ու տոնավաճառները:

Մշակութային լրատվական ծրագիրն իր լսարանին ներկայացրել է հանրապետության պատկերասրահներում, ցուցասրահներում ու թանգարաններում անցկացվող միջոցառումները, լուսաբանել մշակույթի ոլորտում վաստակ ունեցող գործիչների գործունեությունը: «Մշակութային ազդագիրը» նաև հիմնական ու հատուկ թողարկումներում ներկայացրել է փորձարարական արվեստն ու երիտասարդ ստեղծագործողներին:

Հոգևոր-մշակութային հեռուստաալիքը «Շողակաթ» հեռուստաընկերության հետ համագործակցության շրջանակներում 2012 թվականին ձեռք է բերել և հեռարձակել մի շարք հոգևոր-մշակութային ուղղվածության հաղորդումները. «Հին ու նոր հեքիաթներ», «Մանուկների Աստվածաշունչ», «Եկեղեցական կյանք», «Տոնացույց», «Հարցեր քահանային», «Ավետարանի ուսուցում» և այլն:

Ֆինանսատնտեսական գործունեություն

«Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ն 2012 թվականին իր գործունեությունն ապահովել է «2012 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով նախատեսված միջոցների հաշվին: «Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերություն» ՊՀ-ի և «Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի միջև կնքված դրամաշնորհի հատկացման պայմանագրի համաձայն ընկերությանը հատկացվել է 150000.0 հազ. դրամ դրամաշնորհ: Ընկերությունն այլ աղբյուրներից, մասնավորապես՝ առևտրային գովազդից և հովանավորությունից մուտքեր չի ունեցել, քանի որ «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3.1 կետի համաձայն արգելվում է գովազդի հեռարձակումը Հանրային հեռուստառադիոընկերության հոգևոր-մշակութային ուղղվածության հեռուստաալիքի կողմից:

2012 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերությունը պետական բյուջեից ստացված դրամաշնորհն ուղղել է հեռուստահաղորդումների արտադրությանն ու հեռարձակմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ընկերության 2012 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերն՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների.

Աղյուսակ 9

2012 թվականին Հոգևոր-մշակութային հանրային հեռուստաընկերության կողմից կատարված ծախսերն՝ ըստ առանձին ուղղությունների

N	Ծախսային ուղղությունները	Գումարը (հազ. դրամ)
1	Աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	26,956.1
2	Արտադրական ծախսեր	72,248.1
3	Հեռարձակման ծախսեր	49,781.4
4	Այլ ծախսեր	1002.4
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**149,988.0**

Աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ ծախսային հոդվածը ներառել է հաստիքային աշխատողների և վերստուգողի աշխատավարձի վարձատրության ծախսերը և հաղորդումների ստեղծագործական խմբերի աշխատավարձերը, որոնք կազմում են ընկերության ընդհանուր ծախսերի 17.9 %-ը:

Արտադրական ծախսերը իրենց մեջ ներառում են հեռուստառադիոհաղորդումների արտադրության և ձեռքբերման, հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման իրավունքների ձեռքբերման և հեռարձակման ծախսերը՝ 48.2 %:

Ընկերության հեռարձակման ծախսերը կազմում են ընդհանուր ծախսերի 33.1%-ը, իսկ այլ ծախսերը՝ 0.7 %:

7. «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ

Հանրային հեռուստառադիոընկերությունը Շիրակի մարզում հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեություն է իրականացնում «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի միջոցով: Հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների համար «2012 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով ընկերությանը «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսվել է հատկացնել 24572.3 հազ. դրամ:

Ընդհանուր առմամբ, «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով 2012 թվականին ընկերությանը հատկացվել է 24572.3 հազ. դրամ, որից 21540.9 հազ. դրամը՝ հեռուստառադիոհաղորդումների պատրաստման, իսկ 3031.4 հազ. դրամը՝ հեռարձակման ծախսերի կատարման համար:

«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի հեռուստահաղորդումների հեռարձակումն իրականացվել է Գյումրի քաղաքում և հարակից տարածքներում դեցիմետրային տիրույթի 39-րդ կապուղով և Ամասիայում՝ 41-րդ դեցիմետրային կապուղով, իսկ ռադիոհաղորդումների հեռարձակումը իրականացվել է FM տիրույթում՝ 102.5 ՄՀց հաճախականությամբ:

Հեռուստառադիոհաղորդումների պատրաստման ընթացքում «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ն առաջնորդվել է Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից ընդունված նպատակային ծրագրերով: 2012 թվականին ընկերությունը պատրաստել և հեռարձակել է հեռուստառադիոհաղորդումներ՝ հետևյալ ուղղություններով և ծավալներով.

Աղյուսակ10.

2012 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից պատրաստված հեռուստառադիոհաղորդումների փաստացի ծավալն՝ ըստ առանձին թեմատիկ ուղղությունների

N	Հաղորդման թեմատիկ ուղղվածությունը	Հեռուստահաղորդումների պատրաստման ծավալը հաշվետու ժամանակաշրջանում /ժամ/	Ռադիոհաղորդումների պատրաստման ծավալը հաշվետու ժամանակաշրջանում /ժամ/
1	Լրատվական, լրատվական-	155.65	433.30

	վերլուծական		
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	121.50	18.02
3	Մշակութային	77.43	127.17
4	Մարզական	178.21	365.59
5	Երաժշտական, Ժամանցային	1789.18	6720.08
6	Այլ	815.56	1119.84
Ընդամենը		**3137.53**	**8784.0**

Լրատվական, լրատվական-վերլուծական հեռուստահաղորդումներից հեռարձակվել է «Օրագիծ» ամենօրյա լրատվական ծրագիրը, որն անդրադարձել է քաղաքական, տեղեկատվական, հասարակական և այլ բնույթի իրադարձություններին:

Քաղաքական, տնտեսական և հասարակական ուղղվածություն ունեցող հաղորդումներից հեռուստադիտողին են ներկայացվել «Փակագիծ» և «Ստորակետ» հաղորդաշարերը, որոնց շրջանակներում հրավիրված քաղաքական գործիչների, այս կամ այն ոլորտի պատասխանատուների հետ անդրադարձ է կատարվել մարզին առնչվող տարբեր խնդիրներին, ձեռքբերումներին, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային, իրավական, առողջապահական և այլ ոլորտներում առկա հիմնախնդիրներին:

Մշակութային հեռուստահաղորդումներից հեռարձակվել են «Ես և դու» և «Դեպի տաճար» հաղորդումները: «Ես և դու» հաղորդաշարը ներկայացնում է ժամանակակից մշակութային գործիչների, արվեստագետների ստեղծագործությունները, ինչպես նաև ներկայացնում է տարբեր մշակութային իրադարձություններ, որոնք առնչվել են Գյումրի քաղաքին և Շիրակի մարզին:

«Դեպի տաճար» հոգևոր-մշակութային հաղորդումը ներկայացնում է մեր դավանանքը, առաքելական եկեղեցու ծեսերը, տոները, խորհուրդները, սրբերի վարքերը, աստվածաշնչյան մեկնությունները: Հաղորդաշարի ընթացքում տրվում են պատմական տեղեկություններ եկեղեցիների կառուցման, նրանց շուրջ տեղի ունեցացած իրադարձությունների վերաբերյալ, ինչպես նաև լինում են հարցազրույցներ հոգևորականների և եկեղեցուն մոտ կանգնած մարդկանց հետ:

Մարզական հաղորդումներից հեռուստադիտողին է ներկայացվել «Շիրակ աշխարհի սպորտ»-ը, որն անդրադառնում է մարզում և հանրապետության տարածքում տեղի ունեցած կարևորագույն մարզական իրադարձություններին:

Շիրակի հանրային հեռուստառադիոյի եթերում տեղ են գտել նաև գեղարվեստական ֆիլմեր, հեռուստատեսային սերիալներ, փաստագրական ֆիլմեր և մուլտֆիլմեր:

2012 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոն ռադիոունկնդիրներին է ներկայացել մի շարք ռադիոհաղորդաշարերով՝ «Օրագիծ» լրատվական և «Հետագիծ» լրատվական-վերլուծական, «Փակագիծ» և «Ստորակետ» քաղաքական, տնտեսական և հասարակականական հաղորդաշարերով:

Մշակութային հաղորդումներին 2012 թվականին հեռարձակվել է «Դեպի տաճար» հաղորդաշարը, որն անդրադառնում է Հայ առաքելական եկեղեցուն, տրվում են աստվածաշնչյան մեկնություններ, ինչպես նաև անդրադարձ է կատարվում եկեղեցական տոնացույցին:

2012 թվականին մանկապատանեկան հաղորդումներից եթերում էր «Չէիք սպասում» ժամանցային ծրագիրը: Ներկայացվում են հետաքրքիր, զվարճալի դեպքեր, ծրագրին հեռախոսազանգերի միջոցով մասնակցում են նաև ռադիոունկնդիրները:

Երաժշտական հաղորդումներից 2012 թվականին ռադիոունկնդիրներին է ներկայացվել «Քեզ համար» և «Երաժշտական խճանկար» ռադիոծրագրերը:

Ֆինանսատնտեսական գործունեություն

«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ն 2012 թվականին իր գործունեությունը ապահովել է դրամաշնորհի ձևով պետական բյուջեից ստացված եկամուտների, առևտրային գովազդից, հովանավորությունից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

«2012 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով ընկերության համար նախատեսվել էր ընթացիկ դրամաշնորհ՝ 24572.3 հազ. դրամ: Եկամուտների այլ աղբյուրներից ընկերությունը 2012 թվականին պլանավորել է ստանալ 12000.0 հազ. դրամ եկամուտ, իսկ փաստացի ստացված եկամուտները կազմել են 7315.7 հազ. դրամ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից 2012 թվականին ստացված եկամուտներն՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

Աղյուսակ 11.

2012 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից ստացված եկամուտներն՝ ըստ առանձին աղբյուրների

N	Եկամտի տեսակները	Գումարը (հազ. դրամ)
1	Դրամաշնորհ	24,572.3
2	Առևտրային և այլ եկամուտներ, այդ թվում՝	7315.7
2.1	Գովազդ	2404.8
2.2	Վճարովի եթերաժամանակ	
2.3	Հովանավորություն	4543.0
2.4	Այլ եկամուտներ	367.9
	Ընդամենը	**31,888.0**

2012 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոն պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է հեռուստահաղորդումների և

ռադիոհաղորդումների արտադրությանն ու հեռարձակմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Շիրակի հանրային հեռուստառադիոյի 2012 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների.

Աղյուսակ 12

2012 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից կատարված ծախսերն՝ ըստ առանձին ուղղությունների

N	Ծախսային ուղղությունները	Գումարը (հազ. դրամ)
1	Աշխատավարձ և Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	22,967.4
2	Արտադրական ծախսեր	3,567.5
3	Հեռարձակման ծախսեր	3,256.8
4	Այլ ծախսեր	2,020.9
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	**31,812.6**

Աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ ծախսային հոդվածը ներառել է հիմնականում հաստիքային աշխատողների աշխատավարձի վարձատրության ծախսերը և հաղորդումների ստեղծագործական խմբերի աշխատավարձերը, որոնք կազմում են ընկերության ընդհանուր ծախսերի 72.2 %-ը:

2012 թվականին ընկերությունը 2011 թվականի գործունեության արդյունքներով ՀՀ պետական բյուջե է վճարել 72.5 հազ. դրամ շահութաբաժին:

Տարեկան գործունեության արդյունքներով ընկերությունը ստացել է 60.4 հազ. դրամ զուտ շահույթ:

8. «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը հասարակական կարծիքի ուսումնասիրման աշխատանքներն իրականացնում է «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ի միջոցով:

«2012 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ» ծրագրով ընկերությանը «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսվել և հատկացվել է 8000.0 հազ. դրամ:

Ընկերության հիմնական նպատակն է ուսումնասիրել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոյի եթերում հեռարձակվող հաղորդումների և հաղորդաշարերի վերաբերյալ հանրության կարծիքը: Այդ նպատակով «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ն 2012 թվականին անց է կացրել չորս սոցիոլոգիական հետազոտություն, ինչպես նաև անցկացվել են փորձագիտական 12 հետազոտություններ 1200 փորձագետների

մասնակցությամբ հետևյալ թեմաներով՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները ԶԼՄ-ների մասին», «Կուսակցությունները, հասարակական կազմակերպությունները ԶԼՄ-ների մասին», «Կրթության և գիտության ոլորտի ներկայացուցիչները ԶԼՄ-ների մասին», «Տնտեսության ոլորտի ներկայացուցիչները ԶԼՄ-ների մասին», «Կրոն-ԶԼՄ-ներ կապի առանձնահատկությունները Հայաստանում», «ԶԼՄ-ների դերը սպորտի զարգացման գործում», «ԶԼՄ-ների անդրադարձը ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրներին», «Մշակույթի ոլորտի ներկայացուցիչները ԶԼՄ-ների մասին», «Դատաիրավական համակարգ-ԶԼՄ կապի առանձնահատկությունները հասարակական իրավագիտակցության մակարդակի բարձրացման ենթատեքստում», «Հեռուստատեսության աշխատակիցների տեսակետները ԶԼՄ-ների մասին», «Տպագիր և էլեկտրոնային մամուլի ներկայացուցիչները ԶԼՄ-ների մասին», «Ռադիոյի ոլորտի ներկայացուցիչների տեսակետները ԶԼՄ-ների մասին»:

Վերոնշյալ հետազոտությունների և հարցումների արդյունքները նպաստել են Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության ծրագրերի կառուցվածքում անհրաժեշտ փոփոխությունների կատարմանը, ինչպես նաև ծրագրերի կազմման գործընթացին հանրության մասնակցության ապահովմանը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՋԱՂԻՆՅԱՆ